

1. Ի Ր Ա Կ Ա Ն Հ Ա Տ Վ Ա Ծ

1.1. ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇԸ

2013թ. հունվար-սեպտեմբերին ԼՂՀ համախառն ներքին արդյունքը կազմել է 112300.2 մլն դրամ՝ 2012թ. հունվար-սեպտեմբերի 102531.2 մլն դրամի դիմաց: ՀՆԱ-ի հավելաճի տեմպը կազմել է 8.1 տոկոս, ինդեքս-դեֆլյատորը՝ 1.4 տոկոս:

2013թ. հունվար-սեպտեմբերին մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն, ընթացիկ գներով, կազմել է 761.0 հազ. դրամ, 1850.7 ԱՄՆ դոլար կամ 1405.4 Եվրո՝ 2012թ. հունվար-սեպտեմբերի 702.4 հազ. դրամի, 1755.0 ԱՄՆ դոլարի, 1369.9 Եվրոյի դիմաց:

Արտադրված համախառն ներքին արդյունքի կառուցվածքը

/ընթացիկ շուկայական գներով, մլն դրամ/

	2012թ. հունվար- սեպտեմբեր	2013թ. հունվար- սեպտեմբեր	իրական հավելաճի տեմպը (տոկոսներով)	ՀՆԱ-ի կառուցվածքը (տոկոսներով)	
				2012թ. հունվար- սեպտեմբեր	2013թ. հունվար- սեպտեմբեր
Համախառն ներքին արդյունք	102531.2	112300.2	8.1	100.0	100.0
Ապրանքների արտադրություն այդ թվում՝	36735.8	37699.7	1.2	35.8	33.6
Արդյունաբերություն	13803.2	14690.5	4.9	13.4	13.1
Անտառային տնտեսություն	99.0	145.8	45.4	0.1	0.1
Գյուղատնտեսություն	15059.1	15715.9	2.8	14.7	14.0
Շինարարություն	7774.5	7147.5	-8.9	7.6	6.4
Ծառայությունների արտադրություն այդ թվում՝	64142.1	74325.5	14.4	62.5	66.1
Շուկայական ծառայություններ որից՝	33012.5	38229.0	15.6	32.2	34.0
Տրանսպորտ և կապ	6288.8	4623.7	6.6	6.1	4.1
Առևտուր և հանրային սնունդ	7466.6	7743.6	2.9	7.3	6.9
Ոչ շուկայական ծառայություններ	31129.6	36096.5	13.1	30.3	32.1
Ֆինանսական միջնորդության անուղակիորեն չափվող ծառայություններ (-)*	5992.2	6319.7	5.4	5.8	5.6
Ապրանքների գուտ հարկեր	7645.5	6594.7	-14.5	7.5	5.9

ՀՆԱ-ի իրական աճի վրա դրական ազդեցություն է ունեցել և ապրանքների, և ծառայությունների արտադրության ոլորտները՝ համապատասխանաբար 1.2 և 14.4 տոկոսով:

ՀՆԱ-ի արձանագրված 8.1 տոկոս հավելաճի տեմպի 3.9 տոկոսային կետն ապահովել է կառավարում և պաշտպանությունը, 1.7 տոկոսային կետը՝ ֆինանսներ և վարկը, 1.2 տոկոսային կետը՝ տրանսպորտ և կապը:

Կառուցվածքային տեսանկյունից՝ 2013թ. հունվար-սեպտեմբերին նախորդ տարվա հունվար-սեպտեմբերի համեմատ աճել է ծառայությունների արտադրության ոլորտի ավելացված արժեքի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ՝ 3.6 տոկոսային կետով: Ի հակառակ դրա, 2.2 տոկոսային կետով նվազել է ապրանքների արտադրության ոլորտի ավելացված արժեքի, 1.6 տոկոսային կետով՝ ապրանքների գուտ հարկերի տեսակարար կշիռը:

* Ֆինանսական միջնորդության անուղակիորեն չափվող ծառայություններն իրենցից ներկայացնում են ֆինանսական միջնորդների բանկային գործարքների ստացած և վճարած տոկոսների տարբերությունը: Քանի որ, գործնականորեն անհնար է անտեսել այդ ծառայություններն ըստ ճյուղերի, այդ իսկ պատճառով ֆինանսական միջնորդության անուղակիորեն չափվող ծառայությունների ողջ ծավալը գրանցվում է որպես պայմանականորեն ընդունված ինչ-որ ճյուղի միջանկյալ սպառում, որի թողարկումը հավասարեցվում է 0-ի, համապատասխանաբար ավելացված արժեքը հանդիսանում է բացասական մեծություն, այսինքն, ընդհանուր տնտեսության մակարդակով համախառն ավելացված արժեքների գումարը (ՀՆԱ) նվազեցվում է այդ մեծության չափով: